

Ζαρτόνκ

1. Αρσέν Αϊντενιάν (1825 - 1902) – πηγή:

<http://jamanak.com/content/%D5%B0%D5%B8%D5%A3%D5%A5-%D5%B4%D5%BF%D5%A1%D6%82%D5%B8%D6%80/9-10-2018-%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80-%D5%A1%D6%80%D5%BD%D5%A7%D5%B6-%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A8%D5%B6%D5%A5%D5%A1%D5%B6-1825-1902>

ՀԱՅՐ ԱՐՍԷՆ ԱՅՏԸՆԵԱՆ (1825-1902)

Հայ լեզուաբանության հիմնադիրներէն Հայր Արսէն Այտընեան ծնած է Պոլիս, 1825 թուականին:

Վիեննայի Միսիթարեաններու մօտ, ան հետզհետէ կը հմտանայ մատենագրութեան, փիլիսոփայութեան, իտալերէնի, ֆրանսերէնի, անգլերէնի, գերմաներէնի, արաբերէնի եւ թրքերէնի մէջ: Հայր Արսէն Այտընեան ծանօթ է եղած նաեւ յունարէնի, սանսկրիտի, պարսկերէնի եւ այլ լեզուներու:

Միսիթարեան Միաբանութեան անդամակցելէ յետոյ, Հայր Այտընեան զբաղած է նաեւ մանկավարժական գործունէութեամբ Պոլսոյ եւ Չմիւռնիոյ մէջ, միաժամանակ ծառայելով գիտական ճոխի եւ ընդարձակ գործունէութեան, հետզհետէ ծաւալելով իր այս կարգի գիտական աշխատութիւնները:

Հայր Այտընեան, 1886 թուականին ընտրուած է Միսիթարեան Միաբանութեան **արքայ**՝ վանահայր:

Ան վախճանած է 1902 թուականին, Վիեննայի մէջ:

Իր բեղուն, արդիւնալից աշխատութեամբ, Հայր Այտընեանի վաստակը եւ աւանդը մեծ է եղած Հայ լեզուաբանութեան բնագաւառին:

Անկախ իր այլեւայլ ուսումնասիրութիւններէն, գիտական աշխատութիւններէն, իր հիմնադրած «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»էն, ան 1866 թուականին կը հրատարակէր իր «**ՔՆՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՄ ԱՐԳԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ**» աշխատասիրական լայնածաւալ գործը, որ նոր «դարագլուխ» բացաւ հայագիտութեան ընդարձակ բնագաւառին մէջ: Հայր Այտընեանի այս գործը, արդարեւ, մինչեւ այսօր տակաւին կը պահէ իր արժէքը՝ որ վստահելի աղբիւր մըն է այն բոլորին՝ որ կը հետաքրքրուին հայ լեզուով եւ անոր ուսուցումով մանաւա՛նդ:

Հայր Այտընեան թափանցելով եւ խորանալով լեզուի զարգացման տեսութիւններուն մէջ, ի վերջոյ կը յանգէր այն եզրակացութեան թէ՛ գրաբարը, թէ՛ն նոր եւ զարգացած լեզու է, բայց հարկ է որ իր տեղը զիջի աշխարհաբարին, որ աւելի մօտ է ժողովուրդի մտածելակերպին, որովհետեւ լեզուն՝ «խորհող մտքի ձայնաւոր նշան»ն է:

Արդարեւ, մտքի հսկայ թռիչք կայ «Զննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» երկին մէջ. լեզուաբանական մեծ ուսումներ, մինչ իր

ժամանակակիցները լեզուի էություն, անոր զարգացման բնույթի եւ օրինաչափություններու բացայայտման գիծով տակաւին խարխափումներու մէջ էին:

Հայր Արսէն Այտրնեան եղած է նաեւ «երգահանգ-երաժշտագէտ»: Ան դաշնաւորած է հոյակապ բազմաձայն Սուրբ Պատարագ մը, նուագախումբի ընկերակցութեամբ:

Իսթանպուլի մէջ «Մխիթար» երգչախումբի կողմէ իրագործուած է Այտրնեանի Սուրբ Պատարագը, երկու անգամ, խմբավարութեամբ հանգուցեալ Տքթ. Տիգրան Սամիկոնեանի: Այնուհետեւ իրագործուած է նաեւ Յովհաննէս Չէքիճեանի խմբավարութեամբ: Իսկ հոգեւոյս Հայր Համբարեանի յորելեանի հանդէսի Սուրբ Պատարագին՝ «Մխիթար» երգչախումբը, առանց նուագախումբի ընկերակցութեամբ՝ բազմաձայն երգած է Հայր Այտրնեանի Սուրբ Պատարագը՝ խմբավարութեամբ հանգուցեալ Պերճ Ծիկահերի եւ երգեհոնահարութեամբ հանգուցեալ Տքթ. Հերման Միսքճեանի՝ որ նուագախումբի բաժինը կիրարկած է:

«Մշակոյթի հոգին՝ հոգիին մշակոյթն է», կ'ըսէ գերման մշակոյթի հանճարամիտ ներկայացուցիչը՝ Եռհան Վոլֆկանկ ֆոն Կէօթէ: Արդարեւ, ժողովուրդ մը, որ գիտէ գնահատել արժէք եւ արժանիք, այն հաւաքականութիւնը՝ որ կը ձգտի ազնիւ եւ բարձր գաղափարականներու իրագործումին, որ կը դիմէ ճշմարիտին, բարիին եւ գեղեցիկին միայն, ահաւասիկ, ան մշակոյթ ունի: Թէ ի՞նչ է մշակոյթը ընդհանրապէս: Հայր Արիստակէս Վարդապետ Պօհնալեան սապէս կը սահմանէ մշակոյթը. «Չարգացում, հարստացում, ազնուացում՝ հոգւոյ զանազան կարողութիւններու, ընկալեալ առաքինութիւններու ամբողջը, ժողովուրդի մը բարոյական կրթութիւնը, ծանօթութիւններ կարգուսարքի՝ որ դիւրատար կ'ընէ մարդկային կեանքը»:

Արդարեւ Հ. Գրիգորիս Վարդապետ Մանեան կ'ըսէ. «Հոգեկան յուզումի վայրկեաններու մէջ՝ ձայն մը.- առ, կարդա՛, կը թելադրէր իրեն ... Տեսաւ գիրքը բարեկամի ձեռքին մէջ, առաւ եւ կարդաց Պօղոս առաքեալի մէկ նամակը, յուզում եւ տարակոյս փարատեցան. որոշեց քրիստոնէայ ըլլալ... Ընթերցումը՝ Քրիստոսի Եկեղեցիին Սուրբ Օգոստինոս, մեծ վարդապետը ծնաւ...»:

Մշակոյթի ծառայել, մշակոյթի հսկայ շէնքին վրայ քար մը աւելցնել՝ մարդկութեան ի նպաստ կատարուած մեծ ծառայութիւն մըն է, եւ երանելի՛ են անոնք, որ գիտեն այդ «քար»ին արժէքը եւ բժախնդրութեամբ, երբեմն զոհողութեամբ կ'աւելցնեն այդ քարը մշակոյթի շէնքին վրայ: Իւրաքանչիւր անհատ իր կարողութեան եւ տարողութեան չափով պէտք է պարտականութեան եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը ունենայ մշակոյթի մը զարգացման իր բաժինը բերելու նուիրական գործին:

Արդարեւ, այս գիտակցութեան հաստատման համար ողջամիտ է՛լ լուսամիտ անձեր պէտք է բերեն իրենց մասնակցութիւնը՝ իրենց կարծիքներով, հօօր եւ ողջախոհ գրիչով, շինիչ խօսքերով, նոյն ինքն իրենց տիպար կեանքով: Ահաւասիկ, այս է պատասխանատուութիւնը մշակութասէր անհատին: Եւ երբ «մշակոյթ»ի մասին է խօսքը, պէտք է նկատի ունենալ անոր ամենէն կարելոր տարրը՝ լեզուն, որ հոգին է, միտքն է եւ ամէն ինչն է մշակոյթին՝ անոր զոյապահպանման եւ զոյատեւման: Յարգը գիտնանք լեզուին եւ անոր մշակներուն, ծառայողներուն...:

ՄԱՇՏՈՑ ԲԱՀԱՆԱՅ ԳԱԼՓԱՔԾԵԱՆ

Հոկտեմբեր 4, 2018, Իսթանպուլ Երեքշաբթի, Հոկտեմբեր 9, 2018

2. *Γουγκάς Ιντζιζιάν (Γουζιός Μικαγελιάν), 1758-1833* – πηγή: <http://azator.gr/?p=10590>

Հայր Ղուկաս Ինճիճեան (Ղուզիոս Միքայելեան, 1758-1833). Հայ մտքի եւ գիտութեան մեծախառնակ երախտաւորը Ն. - 2 Իսուլիս 2018



Հայ ժողովուրդի Մխիթարեան միաբաններու լուսաբաշխ համաստեղութեան մէջ իր ուրոյն տեղն ու արժէքը ունի Հայր Ղուկաս Ինճիճեան, որուն վախճանումին 185րդ տարեկիցը կ'ոգեկոչենք Յուլիս 2ի այս օրը:

Բանասէր եւ հայագէտ, պատմաբան ու աշխարհագրագէտ, աստղաբաշխութեան վարպետ եւ հասարակական գիտութիւններու հմուտ տեսաբան, բազմաձևատակ խմբագիր ու մեծարժէք գիտուն՝ Հայր Ղ. Ինճիճեան անվիճելիօրէն կը հանդիսանայ գլխաւոր ռահ-վիրաներէն մէկը 19րդ դարու հայոց Ազգային Չարթօնքին:

Հայր Ղ. Ինճիճեան ոչ միայն արեւելքի իսլամաւստութեան տակ հիւժող հայութեան առջեւ լայնօրէն բացաւ եւրոպական մտքին ու գիտութեան լուսամուտները, այլեւ հայ ժողովուրդի ազգային հոգեմտաւոր արժէքներուն ուսուցանողը, տարածիչն ու վերանորոգողը եղաւ:

Յատկապէս իբրեւ գիտուն մտաւորականի եւ անխոնջ հրապարակագիրի եզակի համադրումի մը՝ Հայր Ղ. Ինճիճեան ամբողջ կէս դար հոգեմտաւոր սնունդ հասցուց մեր ժողովուրդի զաւակներուն: Իր ուսումնասիրութիւններն ու աշխատասիրութիւնները անուս բազմութիւններուն մատչելի դարձնելու բնատուր ձիրքը ունէր, աշխարհաբարի առաջին մշակողներէն եղաւ, հայ պարբերական մամուլի նախակարապետ դարձաւ ու յատկապէս տարեգիրքներու հիմը դրաւ հայ իրականութեան մէջ:

Ծնած էր 1758ին, Կ. Պոլիս: Մեծ հայրը Ադրիանապոլսէն (Էտիրնէ) էր, հանրաձանօթ՝ Ինճիճի Հանի Միքայել անունով: Հայրը՝ Պոլիս հաստատուած Ինճիճի Պօղոս Միքայել-

լեանն էր: Իսկ մայրը՝ Տիրուհին, կը յիշատակուի իբրև քոյրը Մխիթարեան Միաբանութեան մեծանուն պատմաբան Միքայէլ Չամչեանի (1738-1823):

1770ին հայրը Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւն ուղարկեց 12ամեայ իր զաւկին, որ իր ուշիմութեամբ գրաւեց հոգաճութիւնը Միաբանութեան առաջնորդ Արքեպիսկոպոս Ստեփանոս Ակունց Քուվերին (1740-1824) եւ վայելեց անոր ուշադրութիւնն ու քաջալերանքը: 1774ին, 16ամեայ պատանին ընտրեց հոգեւորականի կեանքը եւ դարձաւ Մխիթարեան Միաբանութեան անդամ: Իսկ 1786ի վերջերուն վերադարձաւ Կ. Պոլիս, ուր մնաց չորս տարի: 1790ին վերստին մեկնեցաւ Վենետիկ, ուր գործեց մինչեւ 1805ի Մարտ 14ը, երբ առողջական պատճառներով՝ բուժման համար դարձեալ վերադարձաւ Պոլիս, երկար ժամանակով հոն մնալու եւ աշխարհագրական որոշ վայրեր մօտէն ուսումնասիրելու մտադրութեամբ:

Հայր Ղ. Ինճիճեան աւելի քան 23 տարի մնաց ու գործեց Կ. Պոլսոյ մէջ: Մեծ ներդրում ունեցաւ 1810ին հիմնադրուած Արշարունեաց Միութեան աշխուժացումին եւ հօրացման մէջ: Միութեան նպատակն էր տարածել ռամիկ, այլեւ աշխարհաբար հայերէնով հրատարակուած գիրքերը: Կազմած էր սեփական մեծ գրադարան մը, որ 1815ին հրդեհի մը բռնկման հետեւանքով ամբողջապէս մոխիր դարձաւ: Հրոյ ճարակ դարձան նաեւ մեծ թուով իր ձեռագիրները, որոնց շարքին՝ «Օսմանեան պետութեան աշխարհագրութիւն» անուն իր ծաւալուն գործին երկրորդ եւ երրորդ հատորները:

1819ին, Արշարունեաց Միութեան հովանաւոր Գիւզեան ունեւոր ընտանիքը օրուան իշխանութեանց կողմէ ենթարկուեցաւ հալածանքի եւ Հայր Ղ. Ինճիճեան, իբրև ընտանիքին մտերիմը, խոյս տուաւ դէպի Օստեսա: Թէեւ տարի մը ետք դրութիւնը կարգաւորուեցաւ եւ Հայր Ինճիճեան 1820ին վերադարձաւ Կ. Պոլիս, բայց Գիւզեան ընտանիքի գլխուն եկած փորձանքին հետեւանքով Արշարունեաց Միութիւնը կազմալուծուած գտաւ: Այդ պատճառով ալ, Միութեան կողմէ նիւթապէս մատակարարուող Հայր Ղ. Ինճիճեանի հրատարակած մեծարժէք «Եղանակ Բիւզանդեան-Բազմավէյ» տարեգիրքը եւս դադրեցաւ լոյս տեսնել:

Ընդհանրապէս կաթողիկէ հայերու նկատմամբ հալածանքի տարիներ էին 1820ականները. 1828ի սկզբնաւորութեան, Կ. Պոլսոյ կաթողիկէ հայերը արքայութեան իշխանութեանց կողմէ: Հայր Ինճիճեան՝ Պոլիս մնալը այլեւս վտանգաւոր համարելով՝ նոյն տարուան Մայիսին վերջնականապէս գնաց Վենետիկ, ուր տարի մը առաջ վախճանած Հայր Գաբրիէլ Աւետիքեանի (1751-1827) փոխարէն ընտրուեցաւ Միաբանութեան փոխ-առաջնորդ: Այդ պաշտօնին վրայ ալ վախճանեցաւ 2 Յուլիս 1833ին:

Հանրագիտական աղբիւրները միաձայնութեամբ կը շեշտեն, որ Հայր Ղուկաս Ինճիճեան իր անունին կապեց բանասիրական եւ խմբագրական բեղուն եւ մեծարժէք վաստակ մը: Յատուկ գնահատանքի արժանի են.

— 1791ին Վենետիկ լոյս տեսած իր «Տեսութիւն համառօտ հին եւ նոր աշխարհագրութեան» չափածոյ երկը, որ նաեւ լրիւ թարգմանուած է իտալերէնի, իսկ մասնակիօրէն՝ ֆրանսերէնի:

— 1794ին հրատարակուած «Ամարանոց Բիւզանդեան» գիրքը:

— 1799-1802ին՝ «Տարեգրութիւն»ներու շարքը, որ «Ազդարար»էն յետոյ երկրորդ պարբերականը եղաւ հայ իրականութեան մէջ, նաեւ եղաւ առաջինը՝ աշխարհաբար լեզուի իր գործածութեամբ: Կը պարունակէ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրադարձութեանց մասին հակիրճ տեղեկութիւններ:

— 1803-20ին, «Տարեգրութիւն»ներու փոխարէն, լոյս տեսած «Եղանակ Բիւզանդեան--Բազմավէպ» աշխարհաբար տարեգիրքը, աւելի ճոխ ու բազմազան բովանդակութեամբ, նաեւ՝ աւելի մեծ ծաւալով ու գեղեցիկ նկարազարդումներով:

— 1824էն սկսեալ հրատարակուած «Դարապատումներ» շարքը, տարեկան մէկ կամ երկու հատորով, որոնցմէ իւրաքանչիւրը կը պարունակէ դարաշրջանի մը քաղաքական եւ մշակութային իրադարձութեանց պատմութիւնը:

Հայր Դուկաս Ինճիճեանի թողած ժառանգութեան մաս կը կազմեն նաեւ պատմաբանասիրական եւ աշխարհագրական ուշագրաւ հետազօտութիւններ, որոնք կը պարունակեն հարուստ նիւթեր՝ հին Հայաստանի պատմութեան, աշխարհագրութեան, տեղագրութեան եւ հնութեանց մասին:

Անոնց կարեւորագոյններն են՝

— «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» բազմահատորեակի առաջին մասին Ա. հատորը եւ երկրորդ մասին Ե.-Զ. հատորները (1806, 1804):

— «Ստորագրութիւն հին Հայաստանեայց»ը (1822), ուր մանրամասնօրէն ներկայացուած են պատմական Հայաստանի 16 նահանգները, տրուած է անոնց տեղագրական եւ աշխարհագրական նկարագիրը:

— «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» (երեք ստուար հատորներ, տպուած Վենետիկ, 1835ին):

Հայր Ինճիճեան հրատարակած է նաեւ քանի մը մասնայատուկ աշխատութիւններ, որոնք իբրեւ դասագիրք օգտագործուած են ատենին, ինչպէս «Պատմութիւն կենդանեաց ի չորս կարգս բաժանեալ՝ ի ցամաքային, ի ջրային, յերկակենցաղ եւ յօդային» (Վենետիկ, 1801: Բ. տպագրութիւն՝ 1810):

Վերջապէս, բայց ո՛չ վերջինը, յատուկ յիշատակութեան արժանի է Հայր Դուկաս Ինճիճեանի աշխատասիրութիւնը «Ազգասիրութեան մասին», զոր հայ մտքի եւ գիտութեան մեծարժէք այս Մխիթարեանը գրած էր 1812ին, Արշարունեաց Ընկերութեան խնդրանքով՝ ներկայացնելու համար իր համոզումներն ու տեսակետները ի պաշտպանութիւն հայոց ազգային հոգեմտաւոր գանձարանին:

3. Γεβόντ Αλισάν (1820-1901) – πηγή : <http://azator.gr/?p=5453>

Հայր Ղեւոնդ Ալիշան (1820-1901). Հայոց ռզմէլէն հարստութեան վերանորոգման Նահապետը Ն.
6 Ιουλίου 2017



Յուլիս 6ի այս օրը ծննդեան տարեդարձն է հայ ժողովուրդի հոգեմտաւոր հարստութեան նոր ժամանակներու Նահապետին՝ Հայր Ղեւոնդ Ալիշանի:

Ստեղծագործելու եւ ուսումնասիրելու, գիտութիւն ամբարելու եւ ճանաչումի իր անսպառ պաշարը անմնացորդ բաշխելու, այլեւ ու մանաւանդ՝ սերունդներ Հայկեան Հանճարի պաշտամունքով դաստիարակելու անմահ գործին ռահվիրան է Ալիշան:

Օժտուած՝ գրողի ու գիտաշխատողի բացառիկ շնորհներով, ստեղծագործելու բարձ-

րորակ տաղանդով եւ ճառագայթող իմաստութեամբ, Հայր Ղեւոնդ Ալիշան լիարժէք շնչաւորեց ու բեղմնաւորեց իրեն ընծայուած կեանքի ժամանակը: Անխոնջ աշխատանքն ու ստեղծագործութիւնը կոչոււմ դարձան Նահապետին համար, որ մինչեւ ալեհեր ու ծերունագարդ իր տարիքը՝ ամբողջապէս նուիրուեցաւ հայոց հոգեմտաւոր հարստութիւնը վերանորոգելու երկունքին:

Ալիշանի ծննդեան 197րդ տարեդարձին նուիրուած այս վկայութիւնը կ'արժէ սկսիլ իր իմաստուն պատգամներով հաղորդուելու պահով.

— *Մի ուրանար զերկիրդ եւ զագոյ սիրուն:*

— *Ծառն արմատով է ծառ՝ տունն հիմամբ է տուն:*

— *Չկայ աւելի պատուական արարած, քան մարդը, որուն համար ստեղծուած է ամէն բան:*

— *Թշնամիին ջախջախելու համար հարուած եւ հանճար է պէտք:*

— *Արծիւ միտքը արծուի թել ալ կ'ուզէ:*

Այսպէ՛ս. Յուլիս 6ին, 197 տարի առաջ, Պոլսոյ մէջ, հնահաւաք ու դրամագէտ Պետրոս-Մարգար Ալիշանեանի ընտանեկան յարկին տակ ուրախութիւն կը տիրէր:

Լոյս աշխարհ եկած էր արու գաւակ մը, որուն անունը դրին Քերովբէ:

Օրհնեալ եւ օրհնաբեր ծնունդ էր.

— Ապրեցաւ մինչեւ 1901 թուականը՝ ստեղծագործական բեղմնաւոր կեանքով:

— Ապրեցաւ անբասիր վարքով՝ մարմնաւորելով հայ հոգեւորականի սրբակեաց կերպարը:

— Ապրեցաւ հանճարեղ անմահներու ճառագայթումով՝ լուսաւորելով ու ջերմացնելով արդի ժամանակներու ՀԱՅՈՒՆ սիրտն ու հոգին, միտքն ու էութիւնը:

Եւ յաւերժացաւ Հայր Ղեւոնդ Ալիշան անունով:

Դէպի աղբիւրը յոյսին տեւական ձգտումի եւ անխոնջ աշխատանքի ուղեւորութիւն մը եղաւ իր կեանքը:

Պոլսոյ «Չալըխեան» նախակրթարանը հազիւ աւարտած՝ 12 տարեկան Քերովբէն դրկուեցաւ Վենետիկի Սուրբ Ղազարի վանքը եւ յանձնուեցաւ Մխիթարեաններու դաստիարակութեան: Վանքի Ընծայարանն ու «Սուրատ Ռափայէլեան» բարձրագոյն վարժարանը աւարտեց 1841ին՝ արդէն կուսակրօն վարդապետ ձեռնադրուած: Անմիջապէս նուիրուեցաւ նոյն վարժարանէն ներս ուսուցչութեան՝ միաժամանակ աշխատակցելով 1843ին կեանքի կոչուած «Բազմավէպ» հանդէսին: Այս շրջանին յոյս տեսան իր առաջին բանաստեղծութիւնները, որոնք գրաբարով գրուած էին եւ կը կրէին Մխիթարեաններու դասական դպրոցին շեշտակի կնիքը:

1848ին նշանակուեցաւ «Ռափայէլեան» վարժարանի տեսուչ՝ միաժամանակ ստանձնելով «Բազմավէպ»ի խմբագրութիւնը (1849-1851):

Ամբողջ Եւրոպան ցնցող յեղափոխական պոռթկումներու ժամանակներ էին. իսկ Իտալիոյ տարածքին ազգային միաւորման ու ազատագրութեան յեղափոխական շարժումները իրենց բարձրակետին հասած էին: Այդ խմորումները անտարբեր չձգեցին երիտասարդ Ալիշանին, որ «Բազմավէպ»ի էջերուն լոյս ընծայեց «Նահապետ» ստորագրութեամբ իր ազգային-յեղափոխաշունչ բանաստեղծութիւնները: «Պլպուլն Աւարայրի», «Հայոց Աշխարհիկ», «Լուսնկայն Գերեզմանաց Հայոց», «Բամբ Ուրոտան» եւ «Նուազք» շարքի միւս բանաստեղծութիւններով՝ Ալիշանի «Նահապետի երգերը» ոչ միայն նոր ուղի բացին Մխիթարեաններու դասական քերթողութեան առջեւ, այլեւ՝ ընդհանրապէս արդի հայ գրականութիւնը թարմացուցին ու յառաջ մղեցին վիպապաշտ (ռոմանթիք) դպրոցի հունով: Աւելի՛ն. հայ ժողովուրդի ազգային-ազատագրական զարթօնքին կրակը վառեցին ժամանակի հայ մտաւորականութեան եւ երիտասարդութեան մէջ՝ եւրոպական ոստաններէն մինչեւ Պոլիս ու Վան, մինչեւ Թիֆլիս ու Մոսկուա:

Պերճախօս է վկայութիւնը Ալիշանի կրտսեր ժամանակակից եւ հայոց ազգային ու յեղափոխական զարթօնքին մէջ իր կարգին մեծակշիռ ներդրում կատարած Միքայէլ Նալբանդեանի, որ օրին ողջունելով «Նահապետ ստորագրութեամբ Հ. Դեւունդ Ալիշանեանց արժանաւոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթուածքը՝ «Պլպուլն Աւարայրի», չվարանեցաւ յայտարարելու, թէ «չափաբերական քերթուածոց մէջ արժանաւոր վարդապետը ախոյեան չունի»...

1849ին բռնկած իտալեաւստրիական պատերազմին հետեւանքով՝ «Մուրատ Ռափայէլեան» վարժարանի դասաւանդութիւնները առկախուեցան: 1850ին, Մխիթարեաններու Աբբահայր Գ. Հիւրմիւզի հետ, Ալիշան անցաւ Վատիկան, ուրկէ տարի մը ետք — Մուրատ Ռափայէլեանի կտակին հետ կապուած հարցերու լուծման առաքելութեամբ — ուղարկուեցաւ Լոնտոն: Ալիշան երկարաձգեց Լոնտոն իր կեցութիւնը, որպէսզի մօտէն ծանօթանայ եւ ուսումնասիրէ Քեմպրիճի համալսարանին ու Օքսֆորտի մատենադարանին հին ձեռագիրներու աշխարհահռչակ հաւաքածոն: Ալիշան ոչ միայն մանրամասն քննարկեց, այլեւ՝ ցանկագրեց իր գտած հայկական բոլոր ձեռագիրները: Լոնտոնէն ետք, ուսումնասիրական եւ ինքնազարգացման նպատակներով, Ալիշան շրջեցաւ եւրոպական գլխաւոր կեդրոնները՝ յաջորդաբար Պերլին, Վիեննա, Փարիզ եւ Կանտ՝ Պելճիքա: Վենետիկ վերադարձաւ 1853ին: Համաշխարհային մշակոյթի ու մտքի մեծ կեդրոններուն հետ մօտէն շփումի ծառայած այդ տարիները հիմնական շրջադարձ առաջացուցին Ալիշանի հետագայ գործունէութեան մէջ: Բանաստեղծն ու գրաբարով ստեղծագործող Հեղինակը իրենց տեղը զիջեցան, Ալիշանի մէջ, ազգային շունչով, աշխարհաբարով եւ յառաջդիմական մտածողութեամբ սերունդ հասցնող Դաստիարակին եւ, միեւնոյն առաջադրանքով,

բանասիրական ու պատմագիտական բնագավառներու մէջ կոթողական աշխատասիրութիւններ իրագործող Գիտաշխատողին եւ գաղափարական շարժում հունաւորող Մտաւորականին:

Մանկավարժական իր ծառայութեան շրջանին, «Մուրատ Ռափայէլեան»ի տեսչութեան կողքին, Ալիշան 1859էն 1861 դասաւանդեց նաեւ Փարիզի «Մուրատեան» վարժարանին մէջ:

Հայր Ղեւոնդ Ալիշանի մանկավարժական գործունէութիւնը շարունակուեցաւ մինչեւ 1872 թուականը, երբ ուսուցչական ասպարէզէն քաշուեցաւ եւ որոշեց ամբողջութեամբ նուիրուիլ գիտական աշխատանքի:

Այնուհետեւ, մինչեւ իր վախճանը 22 Նոյեմբեր 1901ին, Հայկեան Հանճարին վեհաշուք Նահապետը փակուեցաւ Ս. Ղազարի վանքի իր աշխատենակին մէջ եւ ստեղծեց աւելի քան յիսուն հատոր հայագիտական պատկառելի երկեր, որոնք փառքը կը կազմեն հայ ժողովուրդի հոգեմտաւոր ժառանգութեան:

Ինչպէս իր բանաստեղծութեանց, նոյնպէս եւ բանասիրական թէ պատմագիտական իր աշխատասիրութեանց մէջ, Ալիշան միեւնոյն մեծ ու խորին պատգամը փոխանցեց հայ ժողովուրդի գաւակներուն.- Պաշտելու աստիճան սիրել եւ պահպանել հայոց լեզուն ու հայրենի հողը, հայն ու իր մշակոյթը, որոնք ծաղկումի եւ ճառագայթումի առաջնորդեցին հայկեան հանճարը՝ դարաւոր ստրկութեան եւ խաւարի ու անկումի ժամանակներուն դէմ ինքնապահպանման եւ վերականգնումի հզօրագոյն զենքերը դառնալով հայութեան իրերայաջորդ սերունդներուն:

Հայկականին ու հայրենականին պաշտամունքը Ալիշան յաւերժացուց նախ իր բանաստեղծութեամբ: 1850ականներու վերջերուն, «Նուագք» ընդհանուր անունին տակ ի մի բերելով համեմատաբար երիտասարդ տարիքին գրուած իր քերթուածները, Ալիշան 1857ին եւ 1858ին յաջորդաբար լոյս ընծայեց «Մանկունի», «Մաղթունի», «Խոհունի», «Բնունի», «Հայրունի», «Տէրունի» եւ «Տխրունի» խորագրուած գրքոյկները, որոնք մէկ կողմէ մարդկային անսահման բարութեան, մարդկայնապաշտ ասպրումներու եւ խոհերու, ինչպէս եւ քրիստոնէական հաւատքի վերահաստատման նորօրեայ աւետարաններ եղան, իսկ միւս կողմէ սրտերուն եւ մտքերուն մէջ վառեցին խարոյկը հայոց փառապանձ անցեալի ոգեկոչման, հայրենի բնութեան պաշտամունքին, հայրենի հողին՝ քարին ու ջուրին ոգեշնչման եւ, մանաւանդ, Հայկեան Հանճարի սաւառնելու ներուժին շղթայազերծման:

Հաւատքի՛ մարդու, ազգայի՛ն գործիչի եւ տաղանդաշատ գրողի իր մեծ պատգամը Ալիշան թուղթին յանձնեց նաեւ արձակ էջերով, որոնք 1871ին լոյս տեսան «Խորհրդածութիւնք՝ ընդ եղեւնեաւ» հատորով:

Իսկ հայագիտական աշխատասիրութեանց իր կոթողական վաստակով՝ Հայր Ղե-

ւոնդ Ալիշան պատրաստեց, բառին ամենէն ընդգրկուն իմաստով, հանրագիտարանը Հայաստան Աշխարհին եւ ստեղծագործ Հայուն: Հակառակ որ բնաւ չտեսաւ աշխարհը հայոց եւ չունեցաւ հնարաւորութիւնը ուղղակիօրէն ապրելու իր պաշտած ժողովուրդի առօրեային մէջ, Ալիշան գաւառ առ գաւառ եւ գիւղ առ գիւղ մանրամասնօրէն ներկայացուց պատմական Հայաստանը՝ իր թե՛ նիւթեղէն, թե՛ ոգեղէն բնութագրով, իր հողով ու բոյսերով, իւրաքանչիւր աւանի կապուած պատմական ու ազգային յիշողութեամբ, հայերէնի ժողովրդային ու բարբառային ճոխութեամբ եւ հարստութեամբ, այլեւ ու մանաւանդ հայակերտ կոթողներով, կանգուն մնացած ու պահպանուած ըլլան անոնք, թէ ոսոխներու կողմէ քարուքանդ եղած...

Մասնագէտներու միահամուռ վկայութեամբ՝ «Յուշիկք Հայրենեաց Հայոց», «Տեղագիր հայոց մեծաց», «Նշմարք եւ նշխարք Հայաստանի», «Շիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական», «Հին հաւատք հայոց», «Արշալոյս Քրիստոնէութեան Հայոց», «Հայապատում», «Շնորհալի եւ պարագայ իւր», «Հայ բուսակ» եւ միւս գործերով, Ալիշան ոչ միայն հայագիտութեան ընծայաբերեց գիտելիքի հսկայական պաշար, այլեւ սկզնադրիւր դարձաւ պատմագիտութեան եւ լեզուաբանութեան, աշխարհագիտութեան եւ բուսագիտութեան բնագաւառներուն մէջ:

Այս բոլորով եզակի մեծութիւն դարձաւ Հայր Ղեւոնդ Ալիշան:

Եւ պատահական չէ, որ Նահապետին վախճանումը համազգային սուգով պատեց ողջ Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Եւ նոյնիսկ մեր օրերուն որքան թելադրական կը հնչէ «Դրօշակ»ի Դեկտեմբեր 1901ի համարին վկայութիւնը, որ Ալիշանը կը հռչակէր «Հայաստանի բարի ոգին» եւ «ազգային յոյսերու ստեղծող հանճար»ը:

Այսօր կը նշենք հայ մտքի ու գրականութեան ալեհեր Նահապետին ծննդեան 197ամեակը եւ կը հաղորդուինք Հայու կենարար իր Հաւատքով՝

Մեր Տէրն ի երկնուց ծայրէն երբ իջաւ

Երկրիս հիման քարն յԱրարատ դրաւ,

Այն մեր Մասիսու երկնածել սարէն

Աչեց ըզբողոր՝ վերացաւ նորէն...

4. Μιχαήλ (Γκαραμπέντ)Τσματσιάν (1738-1823) – Πηγή:

http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_chamchyan_mikayel

Չամչյան Միքայել (Կարապետ) Աբրահամի: Ծնվել է 1738 թվականի դեկտեմբերի 4-

ին Կ.Պոլիսում: Եղել է պատմաբան, լեզվաբան, աստվածաբան: 1762թ-ից եղել

է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, 1769-ից վարդապետ, 1795-

1823 թթ. Կ.Պոլսի Մխիթարյանների Մեծավոր: 1757-

1762 թթ. սովորել է Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան վարժարանում, տիրապետել հ

ին և նորբազմաթիվ լեզուների: Չբաղվել է քարոզչությամբ և ուսուցչությամբ. 1776-

1789 թթ. եղել է Ս. Ղազարի Մխիթարյան դպրոցի վերատեսուչ: Նրան աշակերտել են Ս

. և Հ. Ավգեղյանները, Ս.Չախչախյանը, Ղ. Ինճիճյանը և ուրիշներ: Չամչյանը հեղինակ

ել է «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատությունը (1779), որն ակնառու դեր է

խաղացել հայոց լեզվի ուսուցման գործում և շուրջ հարյուր տարի օգտագործվել որպես

գրարարի քերականության լավագույն դասագիրք (1801-1859-

ին ունեցել է 15 վերահրատարակություն):